

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتك** جريدة يومية سياسية وأدبية - الدرة للسلوة، إيثا درويشيان

1500 Լ.Ո. 76ԳՊ ՏԱՐԻ, ԹԻԻ 31 (21374) ՈՒՐԱԿԹ, 11 ԱՊՐԻԼ 2003 10 ԷՁ

## ԼԻՔԱՆԱՆ ՊԻՏԻ ՉՓԱԿԷ ԻՐԱՔԵԱՆ ԴԵՍՊՈՒՏԱՏՈՒՆԸ

Լրատուական աղբիւրներ իրենց լուրերը վերագրելով ֆրանսական հաւաստի աղբիւրներու, երէկ հաղորդեցին, որ Լիբանան պիտի չփակէ Պէյրութի մէջ իրաքեան դեսպանատունը, որովհետեւ ցարդ յստակ չէ իրաքեան իշխանութեան ճակատագիրը:

Միացեալ Նահանգներ երէկ դարձեալ կոչ ուղղեցին միջազգային ընտանիքին՝ փակելու իրաքեան դեսպանատունները, որովհետեւ այսուհետեւ Սատտամեան իշխանութիւն գոյութիւն չունի: Նախքան իշխանութեան տապալումը, Ուաշինկթըն դարձեալ կոչ ուղղած էր աշխարհին՝ փակելու իրաքեան դեսպանատունները, սակայն ոչ մէկը ականջ տուած էր անոր:

## ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ ԶԻՆԵԱԼ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ԴԱՇՆԱԿԻՅ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԷՄ

### ՔԱՐԻԴՈՎ ԸԱՐՈՒՄՏ ՔԵՐԵՈՒՔԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՔԻՐՏԵՐՈՒ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ԸԱԿԱԿՇԻՈՒՆ ՏԱԿ. ԱՆԳԱՐԱ ՉԱՓԱՋԱՆՑ ՄՏԱՇՈԳ

Պաղտատի անկումն մէկ օր ետք, մայրաքաղաք ներխուժող ամերիկեան ուժերը յարձակումի ենթարկուեցան Սատտամ չի-

եւս պայթումներու ճայնէն արթնցան: Շէնքերու մէջ, կամուրջներու եւ ինքնաշարժներու տակ պահուրտած փնտալներ յարձակում-



Քիրտ զինեալներ՝ Զերքուցի մէջ

### ԻՐԱՔՑԻ ՇԻԻ ԴԵԿԱԿԱՐ ՄԸ ՄՊԱՆՆՈՒԵՑԱԻ ՆԱԺԱՖԻ ՄԷՋ

Արեւմտամետ իրաքցի շիի ղեկավար Ապտալի Մաժիտ խորի երէկ սպաննուեցաւ կեղծոնական իրաքի Նաժաֆ քաղաքի մէկ մզկիթին մէջ: Բրիտանիոյ մօտիկ բարեկամ այս իրաքցիին, ըստ ակնմատեսներու, դաշունահարուած է անձանօթներու կողմէ:

սէյնի հաւատարիմ պինեալներու կողմէ, որոնք մէկ պինուոր սպաննեցին եւ 13 ուրիշներ վիրաւորեցին: Միջադէպը տեղի ունեցաւ արեւածագէն առաջ, երբ Պաղտատի բնակիչներ անգամ մը

ներկր գործեն ամերիկացի պինուորներուն դէմ: Ամերիկացի սպայ մը ըսաւ, որ Պաղտատի ցերեկը եւ գիշերը բաւական տարբեր են իրարմէ: Յերեկը կը տեսնուի բնակչութեան ուրախութիւնը

## ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՊԱՂՏԱՏԻՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՅ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԱԼԵՔՍԱՆՏՐ» ՊԱՆԴՈՎԻՆ ՄԷՋ

Երէկ, էշրեֆիէի «Ալեքսանտր» պանդոկին մէջ, կազմակերպութեամբ լիբանանեան - պաղեստինեան կուսակցութիւններու համախմբուածին, տեղի ունեցաւ ազգային լայնածիր հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցան նախագահ գործիչ Լահուտի ներկայացուցիչ՝ նախարար Պշարա Մըրհէֆ, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի ներկայացուցիչ՝ երեսփոխան Այյուպ Ջըմայէտ, վարչապետ Ռաֆիք Հարիրիի



ներկայացուցիչ՝ երեսփոխան Պասէմ Եամուժ, լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութեանց ղեկավարներ, որոնց շարքին՝ Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական

Սատտամի տապալումի համար, իսկ գիշերը տակաւին հաւատարիմ նկատուող պինեալները թակարդներ կը յարեն ամերիկեան ուժերու: Մինչ այդ, Պաղտատի բնակիչները կը շարունակեն կողոպուտը նախարարութիւններուն եւ Սատտամի սեղմ շրջանակին անդամներուն շքեղ բնակարանները: Անոնք պէնպէս գործուին, յատկապէս վրիժառու արարքներ, որովհե-

շարժներ եւ այլ գոյքեր: Երբ հիւանդանոցէն բժիշկներ ամերիկեան ուժերուն օժանդակութիւնը խնդրեցին, անոնք պատասխանեցին, թէ հրահանգ չունին այս ձեռք միջամտութիւն եւ հսկողութիւն կատարելու: Աւելի լաւ չէ վիճակը նաեւ Պասրայի մէջ, ուր բնակիչները կ'ըսեն, թէ ոմիրներ անգործուին, յատկապէս վրիժառու արարքներ, որովհե-

### ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԷՄ

Երէկ երեկոյեան, Պաղտատի մէջ ամերիկացի զինուորներու դէմ անձնասպանական գործողութիւն մը տեղի ունեցաւ, որուն մասին յաւելեալ մանրամասնութիւններ չտրուեցան: Ամերիկացի քանի մը զինուորներ սպաննուած են, երբ իրաքցի մը ինքզինքն պայթեցուցած է անցարգելի մօտ:

Աւելի ուշ հաղորդուեցաւ, թէ այլ գործողութիւն մը եւս տեղի ունեցած է, այս անգամ ականուած ինքնաշարժի պայթումով:

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԵՒ ՎԱՐՁԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՀԵՏ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ քաղաքական այցելութիւններ տուաւ նախագահ գործիչ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Երկու տեսակցութիւններուն ընթացքին, նախարար Յովնանեան եւ երկրին ղեկավարները քննարկեցին լիբանանեան բեմը յուզող հարցեր, շրջանային վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան առնչուող խնդիրներ:

Ա. - Կոչ՝ իրաքցի ժողովուրդին, որ մերժէ պարտադրուած իշխանութիւնը:

Բ. - Կոչ՝ արաբական աշխարհին, որ ոչ մէկ իշխանութիւն ճանչնայ իրաքի մէջ, որ կը նշանակուի ամերիկեան վարչակազմին կողմէ:

Գ. - Կոչ՝ Սուրիոյ եւ Իրանի, իրենց դաշնակցութիւնը ամրապնդելու եւ ռազմավարական պաշտօնակեան համաձայնագիր կնքելու:

Դ. - Ժողովը կ'ողջունէ Սուրիոյ եւ Լիբանանի նախագահներուն ցուցաբերած ազգային կեցածքները, որոնք լաւագոյն կը զբեռնորեն արաբական յստակ դիմագիծը:

### ՆԱԽԱԳԱՀ ԳՈՐԾ ՊՈՒՇ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՔՈՉԱՐԵԱՆԸ

Հայաստանի նախագահի մամլոյ գրասենեակը կը հաղորդէ, որ Հայաստանի նախագահ վերընտրութեան առիթով, Ռոպէրթ Քոչարեան շնորհաւորական ուղերձ ստացած է Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշէն:

### ՀԱՄԱՄԱՆԱԿԱՆ ՅԱՆԿԻՆ ՀԱՄԱՐ Հ. Յ. Դ. ԿԸՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի լրատուական գրասենեակը կը տեղեկացնէ, որ Հայաստանի Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովին (ԿԸՑ) ներկայացուած են խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն Հ. Յ. Դ. համամասնական ցանկի առաջագրման համար անհրաժեշտ ստորագրութիւնները: Օրէնքով պահանջուող 30 հազար ստորագրութեան փոխարէն ներկայացուած է 34,750 ստորագրութիւն: Նշուեցաւ, որ ստորագրութեանց ապահովումը ամբողջացած էր աւելի կանուխ, սակայն կը կատարուէին ստուգումներ՝ խուսափելու համար որեւէ թիրիմացութեան:

Գրասենեակը նաեւ տեղեկացուց, որ ստորագրութեանց հաւաքումը կատարուած է Հայաստանի բոլոր մարզերուն մէջ անխտիր: «Այդ ձեւը հնարաւորութիւն տուաւ անգամ մը եւս կապ հաստատելու քաղաքացիներուն հետ, ծանօթանալով անոնց տեսակէտներուն, առաջարկներուն», նշեց լրատուական գրասենեակի ներկայացուցիչը:

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս, նախագահ Քոչարեանի երդման արարողութեանը ետք հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ անոր հետ եւ շնորհակարար զայն, երկրորդ շրջանի համար նախագահական պաշտօնի ստանձնումին առիթով:

Խօսակցութեան ընթացքին վեհափառ Հայրապետը վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գորակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան եւ այն բոլոր աշխատանքներուն ու ծրագիրներուն, որոնց նպատակն է Հայաստանի պետութեան հզորացումը, սոստանական կեանքի ծաղկումը եւ Հայաստան - Միջուկ գործակցութեան ծաւալումը:

Վեհափառ Հայրապետը նաեւ շնչեղ մեր ժողովուրդի ներքին միասնականութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը՝ հայրենիքի գերագոյն շահերը վեր նկատելով կողմնակի հարցերէ:

### ՎԱՋԷ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՐԸ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ

Երէկ հաստատուեցաւ Միջազգային Կարմիր խաչի աշխատակից, քանատահպատակ Վաչէ Արսլանեանի (48 տարեկան) սպանութեան լուրը: Անոր դիակը յայտնաբերուած է Պաղտատի

## ՓԱՌԵԼ ԿԸ ՓՈՐՁԷ ՄԵՂՄԱՑՆԵԼ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԻՐԱՆԻ ԴԷՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

ՈՒՍԵՒՆԿՈՐԸ, 10 (ԱՅՓ).- Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ փորձեց անդամսնել այն մտապահութիւնները, ըստ որոնց՝ Ուաշինկթըն պինուորական գործողութիւններու ծրագիրներ ունի Սուրիոյ եւ Իրանի հանդէպ:

Փաուըլ ըսաւ, որ ամերիկեան պոլիտեքոնոմի հրաւերները չեն նշանակեր, որ պատերազմի թիրախ են այդ երկիրները: Սակայն Փաուըլ դիտել տուաւ, որ Սուրիա, Իրան եւ այլ երկիրներ պէտք է գիտակցին, թէ իրենց շահերուն դէմ է հաւաքական քանդումի պէնքեր դիպելը եւ ահաբեկչական գործունէութեանց պորպիզ

կանգնիլը:

Փաուըլի յայտարարութեան քանի մը ժամ առաջ, պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամսֆելտ ըսած էր, թէ Սուրիա կ'օժանդակէ եւ պատասխան կու տայ Սատտամ Հիւսէյնի իշխանութեան մնացորդաց: Անցեալ ամիս Ռամսֆելտ ամբաստանած էր Սուրիան Իրաքի պէնքեր տրամադրելու յանցանքով:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձեք Սթրո իր կարգին պոլիտեքոնոմ Սուրիան՝ Սատտամի իշխանութեան մնացորդացին օժանդակելէ: Սթրո կոչ ուղղեց Սուրիոյ՝ գործակցելու դաշնակից ուժերուն հետ:

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ՊԱՀԻԱ ՀԱՐԻՐԻՆ

Հինգշաբթի, 10 Ապրիլ 2003, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս վեհաբանին մէջ ընդունեց այցելութիւնը երեսփոխան Պահիա Հարիրի: Խօսակցութեան նիւթ դարձան շրջանային ու միջազգային հարցեր ու յատկապէս Իրաքի տագնապի լուծումն ու յետպատերազմեան կացութիւնը: Միջին Արեւելքի ընդհանուր կացութեան եւ յատկապէս Լիբանանի վրայ Իրաքի այժմու իրավիճակին ազդեցութեան հաւանականութեան հարցը եւս քննարկուեցաւ:

Վեհափառ հայրապետը կարեւորութեամբ շեշտեց քրիստոնեայ - իսլամ երկխօսութեան զարգացումը, դիմափոխուած ներկայ քաղաքական կացութեան մէջ, սատար հանդիսանալու համար ազգերու կրօններու միջեւ փոխադարձ հանգուրժողութեան ու խաղաղութեան հաստատման:

### ԱՍԻՆ ԺԵՄԱՅԷԼ ԱՅՅԵԼԵՑ ՎԱՐՁԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորաթէմի մէջ ընդունեց նախկին նախագահ Ամին ժեմայէլը եւ երեսփոխան Փիեռ ժեմայէլը, որոնք շնորհակալութիւն յայտնեցին իրենց մօր եւ մեծ մօր մահուան առիթով վարչապետ Հարիրիի ցաւակցութիւններուն համար: Վարչապետ Հարիրի երէկ ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտը, որուն հետ արծարծեց արտաքին գործոց նախարարութեան դիւանագիտական տեղեկագիրներուն առնչուող զարգացումները: Վարչապետարանի հիւրերէն դարձան նաեւ պետական նախարար Միշէլ Ֆարան, երեսփոխաններ Էլիաս Խազէն, Ահմէտ Ֆաթթաթ, Անթուան Հատտատ, Մոհամէտ Եահիա եւ Լիբանանի մէջ Չեխիոյ դեսպան Մարք Սթրիլ:

### ԴԵՍՊՈՒՆՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱԻ

Կառավարութիւնը երէկ գումարեց հերթական իր ժողովը՝ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ:

Ժողովը գլխավորեց նախագահ Կոր. Էմիլ Լահուտ, ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, որ յայտնեց, թէ բոլոր տեղեկատուական միջոցները, որոնք յայտնած են, թէ ինք նշանակելիք նոր դեսպաններու գծով թեկնածուներու անուններ առաջարկած է, կը ստեն:

Կառավարութիւնը որոշում չտուաւ նաեւ դատական իշխանութեանց աշխատանքի



հսկողութեան խորհուրդի անդամներու նշանակման գծով եւ առկայեց կայն:

Ժողովի ընթացքին Մահմուտ Համմուտ կոչուողեց պուշանալու շրջանին մէջ Իսրայէլի կողմէ որդեգրուելիք նախաձեռնութիւններէն:

Ներքին գործոց եւ քաղաքականութեանց հարցերու նախարար Էլիաս Մըր տեղեկագիր մը ներկայացուց Լիբանանի մէջ ամերիկեան ճաշարաններու պայթումներուն մասին, շեշտելով, որ ձերբակալուածներուն հարցաքննութիւնը տակաւին կը շարունակուի:

Միւս կողմէ, կառավարութեան ժողովը որոշեց կայմել նախարարական երկու յանձնախումբեր՝ ուսումնասիրելու համար քաղաքական կայն օդանավորութեան եւ կառավարական հիւանդանոցներուն անվտանգութիւնը:

### ԵՐԿՐԻՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ «ԿԱՐՄԻՐ ԳԻԾ» ՄԸՆ Է, ԶՈՐ ՈՅԵԷ ՄԷԿԸ ԶԻ ԿՐՆԱՐ ՇՐՋԱՆՑԵԼ

ԿԸՍԵ ՆԱԽԱԳԱՆ ԼԱՏՈՒՏ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ շեշտեց, որ երկրին ապահովական կայունութիւնը «կարմիր գիծ» մըն է, Կոր ռեւէ մէկը չի կրնար շրջանցել, որովհետեւ պետութիւնը որոշած է հետապնդել բոլոր անոնք, որոնք իրենց արարքներով կամ կասկածելի ծրագիրներով կը ծառայեն թշնամիին շահերուն:

Իմաստով որդեգրուած միջոցառումները:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՅԱԶՐՈՅՑՆԵՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Հայկական Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն եւ այդ ծիրին մէջ ապագայի հեռանկարներուն ծանօթանալու նպատակով, «Վանայ Զայն»-ն ամբողջ Ապրիլ ամսուան ընթացքին շարքական հեթանոսութեամբ պիտի ձայնասփռուին հարցազրոյցներ, որոնց երկրորդը լսեցէք այսօր՝ Ուրբաթ, 11 Ապրիլ 2003ին, առաւօտեան ժամը 11:00ին, ԸՆԿ. ՅԱԿՈՒԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ հետ:

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐՈՒՆ

Առաջարկներ ունի՞ք: Նոր գաղափարներ: Ծա՛ն լաւ: Զեր ե-նամակները դրկեցէք voicevan@inco.com.lb հասցէին:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում եւ Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնները եւ Հալէպում ՀՀ զլխաւոր հիւպատոսութիւնը տեղեկացում են, որ 18 տարին լրացած բոլոր այն ՀՀ քաղաքացիները, որոնք բնակւում կան ժամանակավարձաբար գտնուում են Լիբանանում, Սիրիայում, ինչպէս նաեւ Յորդանանում, կարող են Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի համասնական ընտրակարգով ընտրութիւններին մասնակցել Պէյրութում եւ Դամասկոսում տեղակայուած Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւններում եւ Հալէպում ՀՀ զլխաւոր հիւպատոսութիւնում գործող ընտրական տեղամասերում:

Դեսպանութիւններում եւ զլխաւոր հիւպատոսութիւններում հաշուառման կանգնած ՀՀ քաղաքացիները ներառուած են ՀՀ ԱԺ ընտրութիւնների ընտրացուցակներում, որոնց կարելի է ծանօթանալ վերոյիշեալ ներկայացուցչութիւններում: Այն ՀՀ քաղաքացիները, որոնց անունները բացակայում են այդ ցուցակներում, համապատասխան յայտ ներկայացնելուց յետոյ լրացուցիչ կ'ընդգրկուեն դրանցում:

Քուէարկելու համար ընտրողները ՀՀ ԱԺ ընտրութիւնների օրը՝ Կիրակի, Մայիս 25ին, առաւօտեան ժամը 8:00ից մինչեւ երեկոյեան 20:00ի ընթացքում պէտք է ՀՀ քաղաքացիական անձնագրերով ներկայանան ՀՀ դեսպանութիւններ եւ զլխաւոր հիւպատոսութիւն հետեւեալ հասցէներով՝ Պէյրութ, Մթալէպ, 28 Ռի Տը Ժամէն Դամասկոս, Ատան Մալքիէ, Պիտտար Իպրահիմ Հանասո Հալէպ, Էլ Քաուաքիպի 4, Թահա Հիւսէյն 12:

Լրացուցիչ տեղեկութիւններ համար կանգաւարել՝ 04-418860 (Պէյրութ) 011-373-2992 (Դամասկոս) 021-268-7240 (Հալէպ)

### ԾԱՂԿԱԶԱՐԴԸ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, Ծաղկազարդի տօնին առիթով, Ս. Նշան Մայր եկեղեցույ մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ՝

### ՎԱՐԴԱՆ ԱՐԲ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան Կատարագ Թափօր Ժամը 7:30ին Ժամը 9:30ին Ժամը 11:00ին

### ԴՈՒՐԱՅԷԲ

Նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4:00ին, տեղի պիտի ունենայ Դոնքաքեթի արարողութիւն, գոր յաւուր պատշաճի պիտի կատարէ եւ քարոզէ՝

### ՎԱՐԴԱՆ ԱՐԲ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Տրախորուած են մեր հաւատացեալ ժողովուրդը: Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Համաձայն 2002 թ. Մայիսին Երեւանում կայացած Հայաստան - Սփիոռք երկրորդ խորհրդածողովի որոշումների եւ առաջարկութիւնների՝ Հայաստանի արտաքին գործերի եւ կրթութեան ու գիտութեան նախարարութիւնների, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի եւ Երեւանի Պետական համալսարանի նախաձեռնութեամբ, 2003 թ. Սեպտեմբերի 15-20ը Երեւանում կ'աշխատանքներ կ'անցան Միջազգային Առաջին Քոնկրէսը:

Քոնկրէսին մասնակցութեան հրաւերներ են ուղղուել բազմաթիւ հայ եւ օտար գիտնականներին: Եթէ կան հայագէտներ, որոնց չի ուղղուել հրաւեր, սակայն նրանք ցանկանում են մասնակցել, կարող են դիմել Քոնկրէսի Կապվածիտիին:

Քոնկրէսի մասնակցութեան, ինչպէս նաեւ լրացուցիչ տեղեկութիւնների համար խնդրում ենք դիմել Քոնկրէսը նախապատրաստող աշխատանքային խմբի ղեկավար Արամ Միմնեանին հետեւեալ հասցէով՝

375025 Երեւան, Ալեք Մանուկեան 1 Երեւանի Պետական Համալսարան Միջազգային Կապերի Բաժին Ծաքս/4-374-1/554641, էլ. փ. pr-int@ysu.am

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ Հ. ՀԳԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՆ ՅԱՅՏԱԳՐՈՒՄԵՐԸ

- Ժամը 8:45 «Աստղեր»
- Ժամը 11:00 Հարցազրոյց՝ ԸՆԿ. Յակոբ Բագրատուհիի հետ. Հայկական Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներում մասին.
- Ժամը 12:00 «Մարտը պահե՞նք հայերէնը»՝ Զահանգուլիստ
- Ժամը 3:00 HIT PARADE
- Ժամը 5:00 «Գրական Յուլներ»
- Ժամը 6:30 «Հայ երգաշար»
- Ժամը 8:00 «Հարցամարտ»

### ԺՈՍՊԼԱԹ ԱՅՅԵԼԵՑ ՊԵՐԲԷ ԵՒ ԴՐՈՒՄՏԵՑ ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԾՈՎ ԱՆՈՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար՝ երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ երէկ Պերքէի մէջ հանդիպում մը ունեցաւ մարոնիներու Նասրա Պոլթրոս Սֆէյր պատրիարքին հետ: Ժոմպլաթ շեշտեց, որ Լիբանան մաս չի կազմեր «քաղաքակրթութիւններու պատերազմ»ին, բայց կը գտնուի շրջանին մէջ նոր քարտէսի մը ուրուագծումին ծիրէն ներս:

Ժոմպլաթ դրուատեց իրաքեան տագնապին գծով եկեղեցույ որդեգրած կեցուածքը: Ժոմպլաթ նկատել տուաւ, որ շրջանը հարուածող «փոթորիկ»ին պիտի յաջորդեն այլ «փոթորիկներ», եզրակացնելով, թէ իրաքի ժողովուրդը այնքան դիւրակամ չ'ընդունի ամերիկեան գերիշխանութիւնը: Ժոմպլաթ շեշտեց ներքին երկխօսութեան ու միասնակեան ամրապնդման անհրաժեշտութիւնը, նշելով, թէ մեծ դեր կը խաղայ Սֆէյր պատրիարքը այս իմաստով:

### ՊԵՐԲԷ ԿԸ ՊԱՏԱՍԵԱՆԷ ՌԱՄՍՖԵԼՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերբէ երէկ դիտել տուաւ, որ Միացեալ Նահանգներ կ'ուզեն ճշդ ընդդիմադիր, յամառ եւ ըմբոս բոլոր ձայները, նկատել տալով, որ նման քաջ ձայներ լսելի են միայն Սուրիոյ մէջ:

Պատասխանելով Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտի կողմէ Սուրիոյ դէմ կատարուած սպառնալիքներուն, Պերբէ շեշտեց, որ անոնք կը նպատակադրեն Պաղեստինի մէջ «լուծումներ» սպառնալիքները միջոցառումները եւ ոչ թէ սուրիական օգնութիւնը Իրաքի գծով: Պերբէ աւելցուց, որ խօսքերն ու յայտարարութիւնները Իրաքի մասին են, սակայն անոնց արձագանգները Պաղեստինի ուղղուած:

### ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ժունիէի, Անթիլիասի, Զալքայի եւ շրջակայից Ս. Յարութիւն եկեղեցույ թաղակազմութիւնը կ'ու գայ յատարարելու, թէ յառաջիկայ Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, տօնը է Ծաղկազարդի: Առաջ, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ՝

### ՓԱՌԵՆ ԿՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Առաւօտեան ժամերգութիւն 7:30ին Սկիզբ Սուրբ պատարագի 9:30ին Զարոգ 11:00ին Մանուկներու թափօր 11:30ին

Նաեւ երեկոյեան ԴՈՒՐԱՅԷԲի արարողութիւն տեղի պիտի ունենայ կէսօրէ ետք ժամը 4:00ին: Արարողութեան պիտի հանդիսատեսէ՝

### ՇՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

### ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀՄՆԴԻՍԱՒՈՐ ԹԱՓՈՐ ԱՆԹԻԼԻՍԱԻ ՄԷՉ

Կիրակի, 13 Ապրիլ, Ծաղկազարդի տօնին առիթով, Անթիլիասի Ս. Քրիզոք Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ՝

### ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՍԵՂԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան Կատարագ Ժամը 8:00 Ժամը 10:00 Ժամը 10:30

Ծաղկազարդի տօնին առիթով հայ մանուկներուն ու պատանիներուն իր հայրական խօսքը պիտի ուղղէ եւ ապա վեհարանին մէջ զիրենք պիտի ընդունի՝

### Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

### ԴՈՒՐԱՅԷԲԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4:00ին, տեղի պիտի ունենայ Երեկոյեան ժամերգութիւն եւ Դոնքաքեթի արարողութիւն, գոր պիտի կատարէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝

### ԶԱՐԵԿ ԱՐԲ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու առաւօտեան Ս. պատարագին եւ յետմիջօրէի արարողութեան, լեցուցելու համար Զրիստոսի գալստեան խորհուրդով:

# ՆԱԽԱՐԱՐ ՀԵՐԱՌԻ - ԳԵՍՊԱՆ ԼԸ ԲՈՒՐԹԻԷ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Պաշտպանության նախարար Խաչիկ Հրապարակի երկն ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Բուրթիէ, որուն հետ քննարկեց Իրաքի դէմ արձանագրուող պարզացումները: Ենթադրեցաւ իրաքեան եւ պաղեստինեան տագնապներուն խաղաղ լուծումներ ապահովելու անհրաժեշտութիւնը, Միջին Արեւելքի մէջ ամրապնդելու համար կայունութիւնը:

Հրապարակ արժեւորեց Ֆրանսայի որդեգրած կեցուածքը իրաքեան տագնապին գծով:

# ՎԱԶԷ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՐԸ...

Շարունակուած Ա. Էջն

մէջ եւ փոխադրուած՝ հիւանդանոց: Միջազգային Կարմիր խաչի ներկայացուցիչներ յայտնեցին, թէ Միջազգային Կարմիր խաչի երկու ինքնաշարժներ, որոնցմով կ'երթնէին Արսլանեան եւ Տայլ պաշտօնակիցներ, ենթարկուած են կրակոցներու: Նոյն միջադէպին ընթացքին զոհ գացած են նաեւ 13 անձեր, որոնք կը գտնուէին հինգ այլ ինքնաշարժներու մէջ: Միջազգային Կարմիր խաչի ինքնաշարժները կը կրէին կազմակերպութեան խորհրդանիշը: Կարմիր խաչի այն աշխատակիցները, որոնք յաջողած են դուրս գալ ինքնաշարժներէն եւ հասած են Պաղատի իրենց կեդրոնը, չեն յաջողած վերադառնալ դէպքին վայրը եւ ստուգել իրենց գործակիցներուն վիճակը՝ սաստիկ կրակոցներու պատճառով:

Քանատահայ վաչէ Արսլանեան Պաղատի մէջ գործող Միջազգային Կարմիր խաչի վեց աշխատակիցներէն մէկն էր: Ան յատկապէս կը վրադէր Իրաքի մայրաքաղաքի հիւանդանոցներուն ջուր, վերնակ եւ ելեկտրածին շարժակներ մատակարարելու աշխատանքով:

# ՔԱՐԻԴՈՎ ԸԱՐՈՒՍ ԲԵՐԵՈՒԶ ԿԸ ԳՏՆՈՒ...

Շարունակուած Ա. Էջն

տեւ արգիլող եւ պատժող չկայ: Մինչ իրաքցիներ կը կողոպտեն Սատտամի, անոր պաւակներուն եւ բարձրաստիճանի այլ պաշտօնատարներու բնակարանները, որեւէ տեղեկութիւն չկայ իրաքցի ղեկավարին ճակատագիրին մասին: Յայտնի չէ թէ ան ողջ է կամ ոչ, ինչպէս նաեւ ոչինչ յայտնի է անոր պաւակներուն եւ ղեկավարութեան մաս կազմող այլ պաշտօնատարներուն մասին:

Պաղատի հարաւային Տորա շրջանին մէջ, ճամբաներու վրայ ինկած էին տասնեակ մը դիակներ եւ այրած ինքնաշարժներ: Ամերիկացի սպայ մը ըսաւ, որ Սատտամի ֆետայիները յարձակում գործած են ամերիկեան ուժերուն վրայ, որոնք հակադարձելով պատճառած են քաղաքայիններու սպանութիւնը: Ականատեսներ, սակայն, յայտնեցին, որ փնտրողները կրակ բացած են քաղաքայիններ փոխադրող ինքնաշարժներուն վրայ՝ վանոնք սպանալիք նկատելով:

Մինչ այդ, Միջազգային Կարմիր խաչը կոչ ուղղեց բրիտանական եւ ամերիկեան ուժերուն՝ երաշխաւորելու համար Իրաքի մէջ ապահովութիւնը: Կազմակերպութիւնը, որ առկաբաժ էր Պաղատի մէջ իր գործունէութիւնը, երկ վերսկսաւ օժանդակութիւններու բաշխումին:

## ՔՐԻՏԵՐԸ ՊԵՏԸ ԶԷ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵՆ ԲԵՐԵՈՒԹԷ ԵՒ ՄՈՒՄՈՒԼԻ ԿԱՌՈՅՅԸ

Քրտական Կիւնեյ ուժերը երկ առանց ընդդիմութեան գրաւեցին հիւսիսի գլխաւոր քաղաքը՝ Էջ 10

## ՃԱՂԿԱԶՍԱՐԴԸ Ս. ԱՍՏՈՒՍԾԱԾԻՆ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, Ճաղկազարդի տօնին առիթով, հանդիսարար Ս. եւ Աննահ պատարագ պիտի մատուցուի Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ: Երգեցողութիւնը պիտի կատարուի եկեղեցւոյ «ՆԱՐԵԿԱՅԻ» երգչախումբին կողմէ բառաձայն Եկեղեցւոյ եղանակով խմբավարութեամբ ԳԵՌՈՂ ՊԵՏԵՃԵԱՆԻ:

## Պիտի պատարագ եւ քարոզ ԳԵՐՇ. Տ. ԶԱՐԵՆ ԱՐԸ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Թափոր

Ժամը 7:30ին Ժամը 10:15ին Ժամը 10:30ին

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ հաղորդակից դառնալու Զրիստոսի Երուսաղէմ մուտքի տօնին եւ թափօրին:

Ս. ԱՍՏՈՒՍԻՆ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## «ԱՂԱՍԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ.» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին կը սկսին KUNG FU ի մարզումները՝ տարիքային բաժանումներով:

Մանրամասնութեանց համար դիմել համալիրի տնօրէնութեան, հեռ. 04 - 722902 - 3 թիւերուն:


Մերձատր Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութիւն Հայ Աւետ. Արմիս Մշակութային Վարչութիւն

Բարձր Հովանաւորութեամբ

Ն.Վ. Դոկտ. Ղասսան Սալամէի

(Մշակոյթի նախարար)

# ԱՐՄԻՍ



ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ԿԱՄԵՐԳ Վեր. Ներսէս Պալապանեան Խմբավար

Մասնակցութեամբ՝

Լենա Քիրքճեանի Մեցցո Սոփրանո

Մեան Պալապանեանի Դաշնամուր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 12 Ապրիլի, 2003, երեկոյեան ժամը 8.30-ին Ասեմպի Հոլի մէջ, Ամերիկեան Համալսարան, Պէյրոս:

السيرة

السؤال

التحليل السياسي

# ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

السفير المستقبل الذي انصح النصار

«Պաղտատ ամերիկեան հակակշռին տակ», «Սատտամի եւ անոր գործակիցներուն ճակատագիրը անյայտ կը մնայ», «Իրաքի ղեկավարին արձանը վար կ'առնուի Կերրոնական Պաղտատի մէջ», խորագիրները կը հանդիսանան լիբանանեան երկրու մամուլին գլխաւոր խորագիրները:

«Նախար» գրած է. «Ամերիկեան իրասայլեր տարածուեցան Պաղտատի Կերրոնական շրջաններուն մէջ. հարցականներ շրջան կ'ընեն ամերիկեան բռնագրաւումը դիրացող համաձայնագիրներու մասին: Պուշ ուրախութեամբ կը գոռայ.՝ Տապալեցին Կայն, իսկ Մոսկուա կը հերքէ, որ Սատտամ Հիւսէյն ապաստանած ըլլայ Պաղտատի իր դեսպանատան մէջ:

Ըստ թերթին, Իրաքի ներքին ապահովութեան խնդիրը կը վրադէնէ Ուաշինկթըն, իսկ Փենթակոնը քարիւղի վերաբերեալ համաձայնութիւններ կը կնքէ: «Անուար» գրած է, թէ Պաղտատ ինկած է ամերիկեան բռնագրաւումին տակ: Ուաշինկթըն դուրս կ'ուզէ, իսկ Փենթակոնը Իրաքի մէջ եւ սպանալիքներ կ'ուղղէ Սուրիոյ:

Ըստ թերթին, Մոսկուա կը հերքէ, որ Սատտամ Հիւսէյն ապաստանած ըլլայ Պաղտատի իր դեսպանատան մէջ:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Սատտամ Հիւսէյնը Հիւսիսային Բորէա փոխադրելու մասին լուրերը կը բացատրեն առանց դիմադրութեան Պաղտատի շուտափոյթ տապալումին առեղծուածը: Ուաշինկթըն Սուրիան կ'ամբաստանէ իրաքցի պատասխանատուներ փախցրելու յանցանքով եւ կը յայտարարէ, որ Իրաքի մըն է Դամասկոսի, Թեհրանի եւ Փիոնկեանկի համար: Ըստ թերթին, 9 Ապրիլ 2003ը կը ներկայացնէ պատմութեան երկրորդ հանգրուանէն թուական մը:

«Լիուս» լուսարձակի տակ առած է այն պարագան, թէ Պուշի վարչակարգը Սատտամի ճակատագիրը յստակացնելու համար սպանալիքներ կ'ուղղէ Սուրիոյ, Իրանի եւ Բորէայի:

Թերթը իր վերնագիրով գրած է, թէ «Պաղտատի տապալումը յեղաշրջում է թէ համաձայնութեան դաշինք»:

«Տիար»ի համաձայն, անորոշ պատճառ մը կը կանգնէ առանց դիմադրութեան Պաղտատի տապալումին ետին: «Սատտամը փոխադրուելու վերաբերեալ ամերիկեան-ռուսական համաձայնագիրը առաջնորդեց Պաղտատի տապալումին, Սատտամ ու անոր գործակիցները նմանակիցները մը կ'ուզէին զարգացնել, թէ ան գաղտնիք փոխադրուեցաւ», հարց կու տայ օրաթերթը:

Ըստ «Պայրաք»ի, Պաղտատի բնակիչները ողջունեցին ամերիկացիները եւ քան ղեցին իրաքեան վարչակարգի խորհրդանիշները: Ուաշինկթըն իր յաղթանակը կը յայտարարէ եւ կը խօսի իրաքցի պատասխանատուներու դէպի Սուրիա փախուստին մասին:

Թերթը հարց կը դնէ Սատտամ Հիւսէյնի գտնուած վայրին, ինչպէս նաեւ Պաղտատի տապալումին պատճառներուն մասին: «Պայրաք» օրաթերթը լուսարձակի տակ

առած է այն պարագան, թէ Եգիպտոս եւ Սէնտալան Արաբիա կը պահանջեն իրաքցի ժողովուրդէն բնաջարկութիւն մը: Ֆրանսա, Բրիտանիա եւ Գերմանիա կը պահանջեն Իրաքի մէջ ՄԱԿի հիմնական դերակատարութեան:

Պաղտատի նաեւ հարցին մասին «Անուար» նշած է, թէ իրեաներու խմբակ մը յարձակում գործեց Այսրլորդանային մէջ դպրոցի մը վրայ, պատճառելով 29 վիրաւորներ: 5 պաղեստինցիներ նահատակուեցան իսրայէլեան ներխուժումի մը պատճառով:

Ըստ «Լիուս»ի, Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Արաֆաթի փոխանցեց, որ պաղեստինեան նոր կառավարութիւնը պէտք է առաջնորդէ դէպի իսկական բարեփոխում:

«Պայրաք»ի համաձայն, պաղեստինցիները կը վախնան ջարդերէն: Իսրայէլեան արիւսայի ներխուժում Կապալի մէջ, իսկ ժայրայեղականներ յարձակեցան դպրոցի մը վրայ Կապալի մէջ:

Տեղական լուրերու կարգին, «Տիար» նշած է, թէ նախարար Մըր բացայայտեց վերջերս պատահած պայթումներուն մեղակից անձերու ցանց մը:

Ըստ թերթին, եւրոպական հաղորդագրութիւն մը կամ վեկուցադիր մը կը բացայայտէ Ալլապալա Բ. թագաւորին դէմ մահափորձ մը:

«Պայրաք» գրած է, թէ Լահուտ եւ Պըրրի անակնկալի եկան իրաքեան իշխանութեան շուտափոյթ տապալումին դիմաց: Նախագահը յայտարարեց, որ Լիբանանի կառուցութիւնը ամուր է եւ անիկա չ'ապրուի շրջանային փոփոխութիւններէն: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար՝ Տը Վիլֆին Լիբանան կատարուելիք այցելութեան ընթացքին տեղի պիտի ունենան կարեւոր խորհրդակցութիւններ:

## Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## ՃԱՂԿԱԶՍԱՐԴԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 13 Ապրիլ 2003ի առաւօտեան ժամը 10ին:

Պիտի պատարագ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ՝

ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐԶԱՆԻԿ ՏԵՐ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԸ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԸԱՅՈՑ

Յաւարտ Ս. պատարագի, պիտի կատարուի ուստիները եւ աւանդական թափօր Մերոպեան վարժարանի բակին մէջ:

Յետմիջօրի ժամը 5:00ին, ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐԶԱՆԻԿ ԸՆԴՈՒՄ ՏԵՐԸ

Պիտի նախագահէ երեկոյեան ժամերգութեան, ապա պիտի կատարէ ՂՈՒՐԱՍԵԹԻ արարողութիւնը:

Հաւատացեալ ժողովուրդը սիրով հրաւիրուած է մասնակցելու վերոյիշեալ սուրբ արարողութիւններուն:

Advertisement for AFHIL (Armenian Fund for Health Insurance in Lebanon). It features the text 'TOGETHER WE GROW STRONGER' and 'HEALTH CARE LABORATORY SERVICES AMBULANCE SERVICES NURSE AT HOME HOME MEDICAL EQUIPEMENTS'. At the bottom, it provides the address 'BOURJ HAMMOUD, AFED BLDG., TEL.: 01 242 556 - 01 242 557'.

Advertisement for 'ԱՐՄԻՍ' (Armys) martial arts program. It lists the instructor as 'Վեր. Ներսէս Պալապանեան Խմբավար' and mentions 'Մասնակցութեամբ՝ Լենա Քիրքճեանի Մեցցո Սոփրանո Մեան Պալապանեանի Դաշնամուր'. It also provides the location and time: 'Տեղի կ'ունենայ Շաբաթ, 12 Ապրիլի, 2003, երեկոյեան ժամը 8.30-ին Ասեմպի Հոլի մէջ, Ամերիկեան Համալսարան, Պէյրոս:'.

Advertisement for the Holy Spirit Church (Ս. Փրկիչ Եկեղեցի) in Bourj Hammoud. It details the Holy Spirit (Ս. Պատարագ) service on April 13, 2003, at 10 AM, and the Holy Spirit (Ս. Պատարագ) service on April 13, 2003, at 5:00 PM. It lists the officiating priest as 'Ամենապատիւ Եւ Գերերջանիկ Տէր Տէր Ներսէս Պետրոս ԺԹ' and provides contact information for the church.

# «ՓՈՒԼԻՑԸՐ», ՄԱՐՈՅԵԱՆ ԵՒ ՓԱՌԵՐԶ

Աւելի քան կէս դար առաջ, Համաշխարհային Բ. պատերազմի առաջին օրերուն, Ուիլիամ Սարոյեանի «Ձեր կեանքի ժամանակը» քատրերգութիւնը «Փուլիցըր» մրցանակի արժանացաւ՝ գեղարուեստական գրականութեան մարզին մէջ:

Այսօր հայութեան առնչուող եւ այս անգամ՝ փաստագրական-ուսումնասիրական գործ մըն է, որ նոյն մրցանակին կ'արժանանայ: Ցեղասպանութիւններու նկատմամբ ամերիկեան քաղաքականութիւնը վերլուծող Սամանթա Փաուլըրի գործին այս մրցանակին արժանացած գեղասպանութեան բանաձեւ մը յղել ներկայացուցիչներու Տուն:

Եթէ Սարոյեան ամերիկեան մշակութիւնը մէջ ներմուծեց հայկական տարրը, շիրի ու երակը, Փաուլըրի գործը ահագնագ մըն է ներկայ քաղաքական իրադրութեան մէջ, թէ անպատիժ մնացած գեղասպանութիւնները միայն նորանոր ոճերով կրնան յանգեցնել:

Այսպէս, Հայկական Ցեղասպանութեան անպատիժ մնալը քաջալերեց Հիթլերը, Փոլ Փորը եւ միւսները՝ հասնելով մինչեւ 90ական թուականներու Ռուսոստան:

Կ'արժէ փակագիծ մը բանալով անդրադառնալ, թէ 1970ական թուականներուն ՄԱԿի Մարդկային իրաւանց յանձնարարութիւնը խտրականութեան կանխարգելման եմբայանձնախումբին ներկայացուած գեղարուեստական 36 ֆոտո ֆիլմի անդրադարձողը... ռուսոստանցի փորձագետ Նիքոնեմ Թուրանջիանըն էր: Ան արժարացի էր, սակայն չգիտցաւ, որ իր մատնանշուած մէջ շուրջ երկու տասնամեակ ետք իր ազգակիցները եւս պիտի ճեմարկուէին գեղասպանութեան: Մերը իրը էր:

Հիմա, Ցեղասպանութեան նոգող արձագանքները, ինչպէս նաեւ՝ Փաուլըր, հեղինակաւոր «Փուլիցըր» մրցանակի արժանացած երկու անձեր, ամերիկեան միջավայրին մէջ նոյն անգամն է որ կը ճնշեցնեն տարբեր զօղանշներով:

«Փուլիցըր»-ի դատական կազմին այս որոշումէն պէտք է տեղեակ պահենք մեր քոնկրետականներն ու առհասարակ ոչ հայ միջավայրը, որպէսզի ոճերը չկրկնուին:

ՎԱՉԵ ԲՐՈՒՏԵԱՆ

# ՀՈԼՈՔՈՍԱԹԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՍ ԱՌԻԹՅՈՒՆ ԵՒ ՏՈՒՄ ԽՈՐԱՅՆԵԼՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՍ ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

## Կ'ԸՍԵ ՌԻՈԼՖԿԱՆԿ ԿՈՒՄՅՈՒՄ

Այս տարի Սոնրեալի մէջ կայանալիք Ապրիլ 24ի ոգեկոչման պաշտօնական հանդիսութեան (որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 27 Ապրիլ 2003ին, Սոնրեալի Հայ Կեդրոնին մէջ) հրախորտալ բանախօսք է Ուոլֆկանկ Կուսթ, Համալուրկին (Գերմանիա): Ուոլֆկանկ Կուսթ ծնած է 1935ին Հանզվորի մէջ (Գերմանիա), ուր ստացած է պաշտօնային վկայականը: Անկէ ետք, երկու տարի, Թուրքիոյ մէջ ֆրանսական գրականութիւն ուսանելու ետք, ուսած է նաեւ տնտեսագիտութիւն եւ ապա Համալուրկի մէջ Ցուրիւած է իր երազած ասպարէզին՝ լրագրութեան: Այսպէս, լրագրութեան մէջ Կուսթի ասպարէզը կը սկսի 1965ին, «Շփիկը»-ի մէջ, որ գերմանական (եւ եւրոպական) ամենէն մեծ լրատու թերթերն է: Ան վարած է յաջողաբար տնտեսագիտութեան խմբագրի, քաղաքական, գլխաւոր լրագրողի (Փարիզի մէջ, 1970էն 1976), եւ ապա արտաքին քաղաքականութեան բաժնի փոխ տնօրէնի պաշտօնները (այս վերջինը՝ Համալուրկի մէջ): 1986էն 1991, ան պատասխանատու եղած է

«Շփիկը»-ի գրքերու հրատարակութեան, եւ այդ ժամանակամիջոցին հրատարակուած է շուրջ 80 գիրք: Անկէ ետք հրատարակած է թերթին ձեւի տակ բազմաթիւ յօդուածներ, որոնցմէ մէկը՝ 1989ին Հայկական Ցեղասպանութեան մասին էր, եւ որ Գերմանիոյ մէջ հրատարակուած ամենէն երկար յօդուածը եղած է այս միւսին մասին:

1993էն ետք, օգտագործելով «Շփիկը»-էն կանխահա հանգստեան կոչուելու առաջարկը (եւ տակաւին թերթին կողմէ վճարուած մնալով 5 տարիներու համար), երկու գիրք գրած է, մէկը՝ Հայկական Ցեղասպանութեան մասին, իսկ միւսը՝ Օսմանեան կայսրութեան: Ցեղասպանութեան մասին գիրքը Միւնխի մէջ ընտրուած է ամսուան տասը լաւագոյն գիրքերէ մէկը: Սոյն գիրքը ներկայիս սպառած է, սակայն քանի որ ամիսի վեր անոր հայերէն թարգմանութիւնը լոյս տեսած է Երեւանի մէջ:

Այս առթիւ հարցազրոյց մը ունեցանք Կուսթի հետ, զոր կը ներկայացնենք ստորեւ:

Հ. - Ե՞րբ եղած է ձեր առաջին շփուլը հայերուն եւ Հայկական Ցեղասպանութեան հետ:

Պ. - Շատ ուշ եւ ամբողջովին պատահաբար: Երկրորդ աշխարհամարտին ետք խորապէս ազդուած էի ծնողքիս սերունդին ցուցաբերած մերժումի կեցուածքէն, մերժում՝ ծանօթանալու գերմանական նացի շարժումին ծագումին եւ անոր պատճառած բարբարոսութիւններուն, մերժում՝ մասնաւոր հրէական գեղասպանութեանը հետաքրքրուելու: Հրէական գեղասպանութեան ուսումնասիրութիւնը ընկերակցած է ինձի ամբողջ կեանքիս ընթացքին: Օր մը կը կարդայի գիրք մը՝ Ժաք Տէր Ալեքսանեանի «Շփիկը» վրայ երկիրը սեւ էր» գիրքը, որ կը նկարագրէր ինձի շատ ծանօթ փախուստի կեանք մը: Սակայն այս անգամ գոհը հրեայ մը չէր, այլ հայ մը: Այս ձեւով է ահա, որ կը ծանօթանայի Հայկական Ցեղասպանութեան, որուն գոյութիւնը բոլորովին վրիպած էր ուշադրութենէս, ինչպէս նաեւ՝ բոլոր իմ ազգակիցներու ուշադրութենէն, եւ որ որքան նմանութիւններ ունէր Ողջակիզումին հետ: Շուտով Ողջակիզումին ծանօթութիւնս ինձի առիթ տուաւ խորացնելու գիտութիւնս Հայկական Ցեղասպանութեան մասին, որ այլեւս անդադար միտքս էր: Եւ քանի որ ամբողջ ժամանակս կը յատկացնէի հետաքրքրութիւնս շարժող այս նիւթը պեղելով, շուտով դարձայ այս նիւթի մասնագէտներէն մէկը Գերմանիոյ մէջ:

Հ. - Կրնա՞ք անդրադառնալ ձեր գիրքին՝ «Գերմանական պետութեան փաստաթուղթերու ու արխիւները»:

Պ. - Այս գիրքը տակաւին ծրագրային հանգրուանին մէջ է, սակայն կրնայ շուտով իրականանալ, եթէ նիւթականը ապահովուի: Նոյնը՝ անգլերէն թարգմանութեան համար, որ աւելի կարեւոր է: Այս իրագործումէն առաջ (եւ միաժամանակ) ինքնուրուի վրայ լոյս պիտի տեսնէ այս մասին հրատարակութիւն մը (www.armenocide.net):

Այս հրատարակութեան պատմականը կատարելու համար յայտնեմ որ 1919ին Եռանկ Լեփսիուսը, որ մեր մօտ (Գերմանիոյ մէջ) հայերուն մեծ բարեկամն է, հրատարակած է Հայկական Ցեղասպանութեան մասին Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան արխիւներէն քաղուած 440 փաստաթուղթեր: Սակայն այս թուղթերէն շատերը խեղաթիւրուած էին գերմանական կառավարութեան կողմէ, իրողութիւն մը, որմէ Լեփսիուս ինք եւս հաւանաբար տեղեակ չէր, որովհետեւ կ'աշխատէր միայն այս ուղղութեամբ կառավարութեան կողմէ փոխուած օրինակներու վրայ, որոնց մէջ գերմանացիներուն համապատասխանատուութիւնը տեղահանութիւններու եւ հայերու սպանդին նկատմամբ նուազագոյնի իջեցած էր: Աւելին՝ գրեթէ բոլոր անունները ջնջուած էին, հակառակ որ գերմանացիներուն փաստաթուղթերը, որոնք ամէնէն մօտիկ դաշնակիցներն էին թուրքերուն, կը պարունակէին շատ աւելի պատասխանատուներու անուններ, քան, օրինակի համար, ամերիկեան փաստաթուղթերը: Հակառակ որ քանի մը մասնագէտներ նկատած էին տարբերութիւններ Լեփսիուսի հրատարակութեան եւ ինքնատիպ գրութիւններուն միջեւ, կինս եւ ես է, որ հետետողական կերպով բաղդատեցինք փաստաթուղթերու բնագիրները Լեփսիուսի հրատարակած փաստաթուղթերուն: Ինքնուրուի վրայ հրատարակեցինք այս բոլոր բնագիրները եւ բառ առ բառ մատնանշեցինք խեղաթիւրումները:

Հ. - Իսկ ի՞նչ էր պատճառը, որ խեղաթիւրումները այսքան տարի ետք միայն երեւան ելան:

Պ. - Ուշացումին կարեւոր պատճառը այն էր, որ օտար պատմագէտներէն գրեթէ ոչ մէկը եւ նոյնիսկ շատ քիչ թիւով գերմանացի երիտասարդ պատմագէտներ չվիճակի են կարողալու այս փաստաթուղթերը, որովհետեւ անոնց մեծամասնութիւնը (ինչպէս, օրինակ, Կոստանդնուպոլսոյ գերմանական դեսպանատան փաստաթուղթերը)

րը, քաղաքական անձնաւորութիւններու յայտարարութիւններուն գրեթէ ամբողջութիւնը) գրուած է նախկին գոթական գերմաներէնով, որ միայն մեզի նման տարեցները կրնան տակաւին կարդալ: Ձգեցինք նաեւ, որ անգլերէնի թարգմանութեան ամէնէն կարեւոր փաստաթուղթերը, փաստաթուղթերուն ամփոփումներն ու կարգ մը կցեայ գրութիւններ եւ այս բոլորը հրատարակեցինք ինքնուրուի վրայ: Լեփսիուսի կողմէ ընտրուած փաստաթուղթերու բնագրերու կողքին, այս օրերուն 550 այլ փաստաթուղթեր եւս պիտի հրատարակենք ինքնուրուի վրայ՝ ընդհանուր հրատարակուած փաստաթուղթերու թիւը հասցնելով շուրջ 1000ի:

Հ. - Ինքնուրուի վրայ հրատարակութիւնը բաւարար չէ՞ք նկատել:

Պ. - Իմ կարծիքովս, ինքնուրուի վրայ հրատարակութիւնը շատ մեծ առաւելութիւններ ունի: Գլխաւոր հետաքրքրուողները, հայերը, ցրուած են աշխարհի տարածքին, եւ ինքնուրուի իտեյլ միջոց մըն է իրենց համար: Նաեւ՝ միայն ինքնուրուի վրայ կրնանք հրատարակել այս փաստաթուղթերուն գնագուշակը, որ արդէն հաւաքած ենք, եւ որ օրէ օր կ'աճի: Աւելին՝ ինքնուրուի ինձի համար տեսակ մը տեղեկութեան ժողովրդավարականացումն է: Ամէն ոքի մատչելի է, եւ՝ ո՛չ միայն մասնագէտներուն, որոնց համար տեղեկութեան տիրացումը յաճախ բացարձակ սեփականութիւնը կարեւոր մէկ մասնիկն է իրենց հոչակին: «2 տարուան աշխատանք եւ 100 հազար մարք պէտք էր ինձի», կ'ըսէր գերմանացի մասնագէտ մը կարգալէք ետք մեր հրատարակութիւնը, «գիտնալու ինչ որ գիտեմ ներկայիս երկու շաբաթ ձեր ընթերցումէ ետք»: Իմ տեղեկութիւններուն համաձայն, մեր համակարգչային վաւերագրական երեսը աւելի է, քան ինքնուրուի վրայ գոյութիւն ունեցող որեւէ վաւերագրութիւն Հայկական Ցեղասպանութեան մասին:

Վերադառնալով գիրքին, անկարելի է բոլոր փաստաթուղթերը գետեղել մէկ գիրքի մէջ, որովհետեւ 2000է աւելի էջեր պէտք ունինք այդ մէկը ընելու համար: Հիտեւարար, նախատեսուած գիրքին համար ընտրած ենք շուրջ 220 ամէնէն կարեւոր փաստաթուղթերէն: Սոյն շուրջ 800 էջոց գիրքը անոնց համար պիտի ըլլայ, որոնք չեն ուզեր ինքնուրուի կապուել կամ պարզապէս կը նախընտրեն գիրք մը ունենալ իրենց ձեռքերուն մէջ:

Հ. - Հայերու կողմէ օժանդակութիւն կը ստանա՞ք:

Պ. - Կինս եւ ես միակ անձերն ենք մեր խումբին մէջ, որ լիաժամ այս նիւթին վրայ կ'աշխատենք: Համալուրկի մէջ պոստիլ խումբ մը երիտասարդ հայեր կան, որոնք իրենց հանգիստի ժամէն կը գոհնեն մեզի զօրավիզ կանգնելու: Իսկ Երեւանի մէջ, արտաքին գործոց նախարարութեան երիտասարդ հայեր կան, որոնք չեն ճանչնար իսկ, եւ որոնք համակարգչային անցուցիչ ֆրանսերէն են անգլերէն փաստաթուղթերուն մեծամասնութիւնը: Ասոնք բոլորը, ինչպէս նաեւ մենք, սիրոյսօթար կ'աշխատենք: Անհրաժեշտ սարքին համար, Ֆիլմերու գնման եւ մասնաւոր անգլերէն թարգմանութեան, որ մասնագէտներու կը կարօտէր, մեր անձնական դրամական ներդրումէն անկախ, թէ՛ ֆինանսական եւ թէ՛ բարոյական հիմնական օժանդակութիւն ստացանք Թորոնթոյի «Զօրեան» հիմնարկէն, որուն տնօրէնը՝ փրոֆ. Վաչագան Տատեան, որ Հայկական Ցեղասպանութեան մէջ Գերմանիոյ կայսրութեան դերին մեծ մասնագէտն է, հին բարեկամ մըն է: Աւելցնեմ, որ փրոֆ. Թանէր Աբջամն է, որ պատասխանատուն է թրքերէն գրութիւններու թարգմանութեան, որ պատրաստութեան մէջ է:

Հ. - Պատգամ մը ունի՞ք մեր ընթերցողներուն:

Պ. - Հայկական Ցեղասպանութիւնը ամէնէն մեծ աղէտն էր հայ ժողովուրդին համար իր երկար պատմութեան մէջ: Այն իրողութիւնը, որ այս գեղասպանութիւնը տակաւին այսքան քիչ ծանօթ է եւ ճանչցուած չէ արեւմտեան ժողովրդավարական պետութիւններուն կողմէ, ինչպէս պահանջած էր նոյնիսկ Ողջակիզումի ամէնէն նշանաւոր հրեայ պատմագէտներու խմբակ մը, անընդունելի է:

Իրեւ լրագրող համոզումս եւ փորձառութիւնս է, որ վստահելի աղբիւրներու հրատարակութիւնը, յուզական վկայութիւններն ու ծանրակշիռ ուսումնասիրութիւնները կարեւոր միջոցներ են ճշմարտ բանեցնելու քաղաքական եւ համալսարանական միջավայրերու վրայ՝ վերջապէս եւ լրջօրէն գրադելու այս գեղասպանութեան հարցով: Յոյսով եմ, որ 2015ին, ցեղասպանութեան հարիւրամեակին, ընդարձակ վաւերագրութիւն մը գոյութիւն կ'ունենայ, որ պարունակէ ամէնէն կարեւոր աղբիւրները՝ խնդրոյ առարկայ երկիրներուն: Այս վաւերագրութիւնը կրնայ լոյս տեսնել գիրքի կամ ինքնուրուի ձեւի տակ: 12 տարի երկար ժամանակ կը թուի ըլլալ, սակայն այդքան ալ երկար չէ: Կինս եւ ես շուրջ 6 տարի աշխատեցանք գերմանական վաւերագրութեան համար եւ տակաւին երկար աշխատանք ունինք ամբողջացնելու եւ հրատարակելու համար: Առանց դուրսէն օգնութեան, ի վիճակի պիտի չըլլայինք ընդարձակելու մեր ծրագիրը, հակառակ որ մարդիկ կան, որոնք կրնան այդ մէկը ընել: Յամենայնդէպս, կինս եւ ես ձեզի կը վստահեցնենք, որ պիտի շարունակենք մեր աշխատանքը՝ դիւրացնելու հասողութիւնը շատ կարեւոր փաստաթուղթերու եւ անհրաժեշտ փաստերը հայթայթելու, որպէսզի Հայկական Ցեղասպանութեան նման հակառակ ոճերներ չկրկնուին:

ՅՈԼԻՆԷ

**PHOTO NERSES**  
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

**ՀԻՄՆԱԳՐՄԱՆ**  
**25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ**  
**36 photo ֆիլմի**  
**նկարահանումը**  
**միայն 8,000 Լ. Ո.**  
(Kodak Royal քարտի վրայ տպուած  
եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ)  
... ԵՒ US\$2Է ՆԱԵՒ  
Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + նկարի  
INDEX մը

Կը նկարենք փոքրերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒՄ  
յատուկ յարգարանքով

PHOTO NERSES: Պոլոճ Համուտ, Զաղաքապետարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»-ի դիմաց:  
Հեռ. 01 - 261858 եւ 01 - 255992

www.hamazkayin.com



# FUEL CARD

## գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ զանոնք լուսալու պարագային:  
Երբ մագուժ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARD-ը՝ հեռանայնելով  
04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պոլոճ Համուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»-ի մօտ
- ▶ SPEED - Հանքաշ, Կալէրի Իթքիատ
- ▶ ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Հարթ Դաւարնէ
- ▶ MALLAH - Պալախ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Սիայել
- ▶ SPEED - Նահր, «Փեօֆ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատեթ

«Հորիզոն»

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԹՈՒՐԲԻԱ ՄՏԱՀՈՎ՝ ՔՈՆԿՐԵՍԻՆ ՄԷՋ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ  
ՕՐԻՆԱԳԻԾԻ ՄԸ ՆԵՐԿԱՅԱՅՄԱՆ  
ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

Թրքական մամուլը վերջերս հաղորդեց, թէ Ֆրեզնոյէն քոնկրետական Չար Փուշիկեան Քոնկրետին ներկայացուցած է Հայկական Յեղասպանութեան ճանաչման օրինագիծ մը: Ըստ «Սրար» քերթին, օրինագիծը յարկապէս կ'առաջարկէ Ապրիլ 24ը նշել իբրեւ «Հայկական»:

Յեղասպանութեան Յիշատակի Օր»:  
Հ. Գ. Հայ Դարի Երեսնակի գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեան «Նոյնան Տապան»-ի քրքակիցին հարցումին պատասխանելով նշած է, թէ օրինագիծին ներկայացման մասին քրքական կողմին փարսածած փեղեկատուութիւնը չի համապատասխաներ իրականութեան: Իրականութեան մէջ Քոնկրետի անդամներ ճորճ Ռաֆայէլի, Արամ Շիֆ, Ծօ Նոյնկարիկ եւ Ֆրէնք Փալոն յառաջիկայ շաբաթ Քոնկրետին պիտի ներկայացնեն փաստաթուղթ մը՝ Միացեալ Նահանգներու կողմէ Յեղասպանութեան կանխարգելման օրինագիծի ընդունման 15ամեակի վերաբերեալ, փաստաթուղթին մէջ նաեւ կը յիշատակուի Հայկական Յեղասպանութիւնը:



Միասնական, Ապրիլ 9ին Քոնկրետի շէնքին մէջ փեղի ունենալիք ընդունակութեամբ պիտի սկսին Հայկական Յեղասպանութեան յիշատակի միջոցառումները:

Միւս կողմէ, քրքական «Ռաֆայէլ» քերթը հաղորդեց, որ 104 քոնկրետականներ նամակ յղած են Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Գուշին պահանջելով Ապրիլ 24ի փարեկան իր ուղերթին մէջ գործածել Յեղասպանութեան կոչը: Մրահոգութիւն չարտաբերելով այս առնչութեամբ «Ռաֆայէլ» վկայակոչելով Ուաշինգթոնի դիւանագիտական աղբիւրներ կը նշէ, թէ քրքականներին կանխարգելումներու անկայ յարուածութեան պայմաններուն մէջ անհրաժեշտ է վարչակարգին կարելի է անկանխարեւելի քայլեր առնելու: Արդ ղեկավարներու համաձայն, այսօրուան կացութեան մէջ հայկական լուսին դիրքերը գորացած են Քոնկրետի ներկայացուցիչներու Տան մէջ, որովհետեւ Թուրքիա հրաժարեցաւ Ուաշինգթոնի հեպ սեպր գործակցութեան Իրաքի պատերազմին առնչութեամբ: Թրքական կողմին մօտ ստեղծ է նաեւ այն միտադրութիւնը, թէ այս անգամ հրէական լուսին, որ աւանդաբար կը գորակցի Թուրքիոյ, կրնայ զլանալ իր գորակցութիւնը:

ԱՄԵՐԻԿԱԿԱՅԵՐ  
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ...  
ԷՐԶՐՈՒՄԻ ԿՈՒՍԱԿԱԼԻՆ

Պոստյ «Մարմարա» թերթը վերջերս հաղորդեց, թէ թրքական «Զաման» թերթին համաձայն, ամերիկեան Շիբաօ քաղաքին 7 թերթը եւ 8 հայ ընկերներ նամակ մը յղած են իր գործումի կուսակալին՝ անոր շնորհակալութիւն յայտնելով, որ այս տարի էր գործումի «Ազատագրում»-ի տօնին օրը հայ - թրքական բախումներու տեսարաններ չեն ցուցադրուած հետաքննելու: Անոնք այս արարքը նկատած են «երդար» թեան եւ բարեկամութեան» օրինակ:

Լուրը չէ, հաւանաբար կրնայ «Զաման» թերթին կողմէ անհնթեթեթ ապատեղեկատուութիւն մը ըլլալ: Միւս կողմէ, սակայն, կարելի չէ բոլորովին բացառել նման երեւոյթը: Այդ պիտի պարագային անհրաժեշտ է դատապարտել խուճար եւ Հայերու այս «նախաձեռնութիւնը», որ հպարտութեամբ մը կը դնուի հայ - թրքական «եղբայրութեան» ու բարեկամութեանը: Մինչ Հայաստան թուրքերի կողմէ շրջափակուած կը մնայ, մինչ հայ - թրքական բարեկամական յարաբերութիւններ գոյութիւն չունին, մինչ Թուրքիա կը շարունակէ մեծ շաղկապ Յեղասպանութիւնը: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ հայ - թրքական ինչ «բարեկամութեան» եւ բարեկամութեան մասին կը խօսին այս ինքնազուլի Հայերը...

Յիշատակութեան եւ բարեկամութեան, որ կը գրեւորուի վերջերս հայկական նոր կայունութիւն մը գրուած փորձով:

Ստորեւ կը ներկայացնենք այս ուղղութեամբ «Մարմարա»-ի լրատուութիւնը ամբողջութեամբ:

«Զաման» թերթի թղթակից Ռեհան Մորթոզ իր գրութեան մէջ կը տեղեկացնէ, թէ Միացեալ Նահանգներու Շիբաօ քաղաքի թերթը եւ հայ ընկերները միասնաբար նամակ մը յղած են իր գործումի կուսակալին եւ շնորհակալութիւն յայտնած են, որ այս տարի էր գործումի ազատագրումի տօնին օրը հետաքննելու հայ միջոցներու քաղաքին վտարուելու տեսարաններ չեն սփռուած: 12 Մարտի հանդիսութիւններուն այս տարի գեղեցիկ են այն տեսարանները, որոնք ամէն տարի կը կրկնուէին:

Նամակը գրուած է 16 Մարտին՝ Շիբաօյէն 7 թերթերու եւ 8 հայերու կողմէ: Նամակին մէջ անոք գրած են՝ «Մենք թրքական եւ հայկական ծագումներով ամերիկացի քաղաքացիներ ենք եւ կը ընկերներ Շիբաօ: Ուրախութեամբ եւ հպարտութեամբ տեսանք, որ այս տարի հետաքննելու չցուցադրուեցան թուրք - հայ բախումներու վարքը տեսարաններ: Իբրեւ նոյն հողերուն վրայ ապրած ժողովուրդներ կը հաւատանք, թէ ճամանակը եկած է, որ անցեալի հակամարտութիւնները մոռցուին: Եթէ նկատի առնենք աշխարհի այսօրուան վիճակը, ուրախակալ ենք, որ այս կերպով եղբայրութեան ու բարեկամութեան օրինակներ կու տանք ուրիշ ազգերու: Մենք հպարտացած ենք իր գործումի օրինակով: Կը հաւատանք, որ 21րդ դարը սիրով ու եղբայրութեան դարաշրջան պիտի դառնայ»:

ԹԵՐ ԵՒ ԴԵՍ ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ «ԵՐԿԿՈՍՈՒԹԵԱՆ» ԾԻՐԵՆ ՆԵՐԱ

ՕՍՄԱՆԵԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ  
ՄԷՋ ՀԱՅԵՐՈՒ  
ՃԱԿԱՏԱԳԻՐԻՆ ՄԱՍԻՆ  
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

«Մինեսոթա Տէլի» թերթը կը հաղորդէ, որ Մինեսոթայի համալսարանի Հանրային Հարցերու «Համֆրի» հիմնարկին մէջ վերջերս տեղի ունեցած է եւրոբայ խորհրդաժողով մը «Թուրքերի մէջ Օսմանեան կայսրութեան վերջին օրերուն ընթացքին հայերու ճակատագրի մասին»:

«խորհրդաժողովը երրորդն է հանդիպումներու շարքի մը (առաջինը երկուրէր տեղի ունեցած են յաջորդաբար Շիբաօյէն եւ Իլինոյսի համալսարաններուն մէջ), որ նուիրուած է տեղեկատուութեան փոխանակման եւ միջոցներու որոնման՝ այդ տեղեկատուութիւնը փոխանցելու թուրք անտեղեկ հանրութեան եւ Թուրքիոյ պետութեան, որ կը մեծէ ճանչնալ 1915էն 1923 հայերու ջարդը», կը գրէ թերթը:

խորհրդաժողովին խօսք առած է Միւչիկընի համալսարանի դասախօս, ծագումով թուրք Միւլէկ Կէօզէք, որ նշած է՝ «Թէ՛ «Հայկական ջարդերու հարցը այնքան քաղաքականացուցուց, որ քաղաքականութիւնը արգիլեց ակադեմիական որեւէ գործի ծաւալման»:

Ան փորձած է արդարանալ, թէ ինչ ցեղասպանութեան եղբւր չի գործածեր, ոչ թէ որովհետեւ չի հաւատար, թէ տեղի ունեցածը ցեղասպանութիւն է, այլ որովհետեւ այդ եղբւր շատ քաղաքականացուած է, եւ «մարդիկ կը դադրին լսելէ խօսողը, եթէ ան այդ եղբւր գործածէ»:

Իր կարգին, պատմաբան Էրիք Ուէյթը դիտել տուած է, թէ ակադեմիականներ 20րդ դարու սկիզբին հայերուն պատահած դէպքերը կը նկատեն առաջին արդի ցեղասպանութիւնը, սակայն թուրք պետութիւնը կը ժխտէ, որ ցեղասպանութիւնը տեղի ունեցած է:

Ուէյթը նշած է, թէ հակառակ թուրքերի պետական դիրքորոշման, թուրք ժողովուրդը սկսած է անդրադառնալ իրողութիւններուն: «Թուրքերը, իբրեւ ժողովուրդ, բաւական տարբեր դիրքորոշում ունին՝ բաղդատմամբ թրքական պետական կեցածքին», նկատելի տուած է ան:

Քննարկումներու նիւթերուն խնդրայարոյց բնոյթին պատճառով կազմակերպչները խորհրդաժողովի առաջին երկու օրեան նիստերը կայացուցած են ղեռնփակ:

խորհրդաժողովին թրքական պետական տեսակետը պաշտպանողներին կ'ըզմարտէ թուրք մասնագէտ տասնամեակած Մելիքէմ Տենիզը: Ըստ անոր, թուրքերը քաղաքացիական պատերազմի մը կը հակադարձէին: «Հայերը միացան թշնամիին եւ մեր թշնամին դարձան: Մենք սպաննեցինք պաշտպանելու համար մեր հողերը եւ ազատութիւնը, եւ այս մէկը իրենց ցեղասպանութիւնը կը կոչեն», յայտարարած է թուրք բժշկուհին:

Էրիք Ուէյթը իր խօսքին մէջ Հայկական Յեղասպանութիւնը առաջին արդի ցեղասպանութիւնը նկատելով՝ գայն նկարագրած է իբրեւ «ժողովուրդ մը բնաշնչելու գերազանցօրէն կազմակերպուած եւ գերազանցօրէն հետեւողական միջոցառում»:

Փրօքը. Էլյազըր Պարթաբ յայտնած է, թէ թուրք-հայկական յարաբերութիւններուն պատմութիւնը ուսումնասիրելը դժուար է, որովհետեւ թրքական արխիւները փակ են հանրութեան դիմաց: Այսուհանդերձ ան անհրաժեշտ նկատած է երկխօսութեան ծաւալումը:

